ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) «մաքսավճարի, որը հաշվարկվում է առանց նվազեցումների» բառերը փոխարինել «սույն կետում նշված դեպքերի» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններ.

«Այն դեպքերում, երբ՝

ա. վերամշակման նպատակով արտահանված ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմի համար նախատեսված է 0 տոկոս մաքսատուրք, սակայն օրենքով նախատեսված է ԱԱՀ-ի գանձում ներմուծման պահին, իսկ վերամշակված ապրանքների ներմուծման համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծվող ապրանքների համար նախատեսված է 0 տոկոս մաքսատուրք և միաժամանակ՝ ներմուծման պահին ԱԱՀ-ի գանձում օրենքով նախատեսված չէ, կամ

բ. վերամշակման նպատակով արտահանված ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմի համար նախատեսված է 10 տոկոս մաքսատուրք և միաժամանակ օրենքով նախատեսված է ԱԱՀ-ի գանձում ներմուծման պահին, իսկ վերամշակված ապրանքների ներմուծման համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծվող ապրանքների համար նախատեսված է 0 տոկոս մաքսատուրք և միաժամանակ՝ ներմուծման պահին ԱԱՀ-ի գանձում օրենքով նախատեսված չէ, կամ

գ. վերամշակման նպատակով արտահանված ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմի համար նախատեսված է 10 տոկոս մաքսատուրք և միաժամանակ օրենքով նախատեսված է ԱԱՀ-ի գանձում ներմուծման պահին, իսկ վերամշակված ապրանքների ներմուծման համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծվող ապրանքների համար նախատեսված է 0 տոկոս մաքսատուրք և միաժամանակ օրենքով նախատեսված է ԱԱՀ-ի գանձում ներմուծման պահին, ապա՝

ապրանքներ տեղափոխող անձի կողմից վճարման ենթակա մաքսային վճարները հաշվարկվում են՝ ելնելով վերամշակված ապրանքների և վերամշակման նպատակով արտահանված ապրանքների մաքսային արժեքների տարբերությունից՝ կիրառելով վերամշակված ապրանքների ներմուծման համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսատուրքի դրույքաչափը և ավելացված արժեքի հարկով հարկման կարգը:

Այս ռեժիմով արտահանված ապրանքները ներմուծելիս մաքսավճարը հաշվարկվում է առանց նվազեցումների:»:

Հոդված 2. Օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 8702 ծածկագրին դասվող տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

«

8703	Թեթև մարդատար ավտոմեքենաներ, նախատեսված միայն մարդկանց տեղափոխելու համար	0	0

»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից: